ՄԱՐԻՆԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Այսօր «ահաբեկչություն» կոչված երևույթի դեմ պայքարում են աշխարհի գրեթե բոլոր երկրները, այլ հարց է, որ մի քանիսը դա անում են կամովին՝ իրոք վտանգի կանխման նպատակով, իսկ մի մասն էլ հարկադրված, գերտերությունների պարտադրանքով:

Ահաբեկչության դեմ պայքարը հռչակվել է որպես աշխարհի շատ երկրների, մասնավորապես՝ Միացյալ Նահանգների վարած քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Ստեղծվել է անգամ 21-րդ դարի այդ սպառնալիքի դեմ պայքարող երկրների հակաահաբեկչական կոալիցիա, որը գլխավորում է ԱՄՆ-ը:

Այսօր աշխարհին հայտնի ահաբեկչական կազմակերպությունների թիվը հասնում է 500-ի, իսկ նրանց բյուջեն տարեկան կազմում է նվազագույնը՝ 20 մլրդ դոլար [1]:

Ահաբեկչությունը նոր երևույթ չէ համաշխարհային պատմության մեջ: Դեռևս մ. թ. 1-ին դարում Իսրայելում գործում էր հրեա կրոնական ֆանատների խմբավորում, որի անդամներին կոչում էին «զելոտներ»: Նրանք հույսեր էին փայփայում՝ ահաբեկչական գործողությունների միջոցով ազատագրել Իսրայելը հռոմեական լծից և երկրի վրա հաստատել «Աստծո Թագավորությունը»: Իսկ ամենաառաջին խոշոր և վտանգավոր ահաբեկչական խմբավորումը պատմության մեջ եղել են *«ասասասինները»* իսմաիլիտների աղանդավորական խումբը, որը 17-18 դարերի ընթացքում հաստատվել էր արաբական խալիֆայության տարածքում: Այն նաև քաղաքական և կրոնական տեռորը իր մեջ խտացնող առաջին ահաբեկչական խմբավորումն էր, որ ստեղծեց մարդասպանների մի մեծ ցանց Մերձավոր Արևելքում ([2], [11-16]):

19-20-րդ դարերում ահաբեկչությունը հեղափոխական դրսևորումների և իշխող ղեկավարների սպանությունների ձև ընդունեց: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում և դրանից հետո տեռորը վերածվեց պետական քաղաքականության: Համաձայն պատմաբանների ու ոլորտի մասնագետների պնդումների՝ դա առավելապես բնորոշ էր երիտթուրքական Թուրքիային, կոմունիստական Սովետական Միությանը և ֆաշիստական Գերմանիային: Իսկ արդեն Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Լատինական

Ամերիկայում նախորդ դարի 70-80-ական թթ-ին ահաբեկչությունը ծեռք բերեց նոր՝ կրոնական, էթնիկական և սոցիալական ուղղվածություն:

Մարդկային քաղաքակրթության ժամանակակից փուլը ևս ուղեկցվում է՝ էքստրեմիստական խմբավորումների գործունեության ակտիվացմամբ, որի՝ այս կամ այն կոնֆլիկտի լուծման հիմնական մեթոդը տեռորն է: Ամենուր ակնառու է տարաբնույթ կոնֆլիկտային իրավիճակների, պայքարի և շահերի իրագործման ահաբեկչական ձևի անհնախադեպ զարգացումը: Այսօր աշխարհի գրեթե բոլոր ծայրերում իրականացվող ահաբեկչությունների շարունակական շղթան ՁԼՄ շատ տեսաբանների կողմից ստացել՝է «երրորդ համաշխարհային պատերազմ» բնորոշումը, քանի որ վերջին տարիներին այս սպառնալիքն ընդունել է ավելի գլոբալ, աշխարհաքաղաքական բնույթ: 2001 թվականի սեպտեմբերի 11-ն այդ առումով հաճախ ընդունված է համարել բեկումնային փուլ ժամանակակից համաշխարհային պատմության մեջ, քանի որ այդպիսով կտրուկ փոխվեցին խաղի կանոնները: Ձևավորվեցին նոր աշխարհաքաղաքական մոտեցումներ: Ոմանք դա նաև կապում են աշխարհում ընթացող գլոբալիզացիոն երևույթների հետ և մատնանշում, որ ահաբեկչությունները հենց գլոբալիզացիայի և աշխարհի «ուժեղների», մասնավորապես՝ ԱՄՆ-ի դեմ ուղղված բողոքի դրսևորումներ են:

«Ժուռնալիստիկան կյանքի հայելին է»,- այս արտահայտությունը հաճախ կարելի է լսել ոլորտի մասնագետներից: Ուստի չպետք է զարմանալի թվա, որ եթե նոր ժամանակաշրջանի առջև ծառացած գերակա խնդիրներից մեկը ահաբեկչությունն ու դրա դեմ պայքարն է, ապա զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների նշանակետերից մեկն էլ ահաբեկչության թեման է: Ի դեպ, ահաբեկիչների գլխավոր նպատակներից մեկն էլ հենց դա է, գրավել լրատվամիջոցների ուշադրությունը՝ այդպիսով հասարակության ուշադրությունը ակամայից հրավիրելով իրենց խնդիրների վրա: Այսօր ահաբեկչության զարգացող միտումներից է՝ փորձել ահաբեկչական գործողությունների ընդգրկման տարածությունը տեղափոխել հեռուստաէկրաններ, համակարգիչներ, թերթերի և ամսագրերի էջեր: Այդ պատճառով զանգվածային լրատվամիջոցների կողմից ահաբեկչության լուսաբանման խնդիրը հետզհետե ավելի արդիական է դառնում, հատկապես իշխանությունների համար, որոնք իրենց հերթին քայլեր են ծեռնարկում «որոշ կարգ ու կանոն սահմանել» ահաբեկչական թեմաներ լուսաբանող լրագրողների համար: Այստեղ է, որ լրատվամիջոցների ներկայացուցիչներն ընդհարվում են ավանդական գրաքննության պատնեշին, որը երբեմն իր նրբանկատ դրսևորումներն է ստանում տարբեր օրենսդրական նախաձեռնությունների միջոցով, որոնք անմիջապես հետևում են ահաբեկչական գործողություններին:

Ահաբեկչությունների նոր դարաշրջանում ՁԼՄ-ի ներկայացուցիչները ոչ միայն հայտնվում են գրաքննության մահակի տակ, այլև ահաբեկիչների նշանակետն են դառնում տարբեր տեսանկյուններից՝ թե որպես ահաբեկչության թիրախ, թե որպես ահաբեկչության իրականացման միջոց ու նպաստող հանգամանք:

«Ահաբեկչությունը և ՁԼՄ-ները» թեման հատկապես, սկսած 20-րդ հարյուրամյակի երկրորդ կեսից, հետաքրքրում է ոչ միայն քաղաքագետներին, օրենսդրական մարմինների ներկայացուցիչներին, պատմաբաններին, իշխանական օղակների ներկայացուցիչներին, այլև հենց իրենց՝ լրագրողներին: Հատկապես մեր օրերում, ամենատարբեր լրագրողական բանավեճերի առանցք է այն հարցը, թե ինչպես լուսաբանել ահաբեկչական գործողությունները. դրանց մասին գրել իբրև ամենաթեժ նորությա՞ն, թե՞ դրանց հպանցիկ անդրադառնալ, որպեսզի չխաթարվի մարդկանց պատկերացումն իրենց շրջապատող իրականության մասին: Խորանա՞լ ահաբեկիչների գաղափարների և գործողությունների նկարագրությունների մեջ, թե՞ հրաժարվել մանրամասնելուց: Սովորաբար այդ հարցերի կոնկրետ պատասխանները բացակայում են: Այսինքն՝ նայած թե որ երկրում է տվյալ լրագրողն իրականացնում իր մասնագիտական պարտքը, ըստ այդմ էլ վերջինիս հիշյալ հարցերի պատասխանները կամ պարտադրվում են այդ երկրում գործող օրենքների և կոնվենցիաների միջոցով, կամ լրագրողն ինքն է առաջնորդվում իր կողմից մշակված էթիկայի կանոններով, և կամ գործում է՝ ելնելով այն լրատվամիջոցի քաղաքականությունից, որտեղ որ աշխատում է:

Այժմ շատ փորձագետներ հանգել են այն եզրակացության, որ ահաբեկիչները որոշ փոփոխություններ են կատարել իրենց գործողությունների իրականացման ձևերի և մեթոդների մեջ: Այսինքն, ահաբեկիչները ցանկանում են արդյունքում տեսնել ոչ թե մեծ թվով մահացած՝ այլ դիտող մարդկանց:

Նրանք ցանկանում են առավելագույն հրապարակայնություն, նրանք ցանկանում են իրենց ուղերձները հասանելի դարձնել լայն լսարանների համար լրատվության բոլոր հնարավոր միջոցներով: Անգամ եթե մարդասպանը վրիպում է կամ ռումբը չի պայթում, ահաբեկիչներին բավական է հենց միայն այն, որ իրենց մտադրության մասին անմիջապես տեղեկանում են շատ-շատերը:

Մի խոսքով, շատ հաճախ ՁԼՄ–ն դառնում է ահաբեկիչների ձեռնածման առարկա՝ նպաստելով նրանց նպատակների իրագործմանը և սպասվածից ավելի մեծ արդյունավետության հասնելուն: Օրինակ, այսպիսի հետաքրքիր համեմատություն է կատարում Ահաբեկչության ուսումնասիրման կենտրոնի փորձագետ Լարրի Սլոանը. «Պատկերացրեք, թե ամայի անտառում մի ծառ է

ընկնում: Եթե այդ անտառում որևէ մեկը չի եղել, որը լսել է, թե ինչպիսի աղմուկով է ընկնում ծառը, ուրեմն արդյո՞ք դա աղմուկ էր: Պարզապես անհրաժեշտ է, որպեսզի ինչ-որ մեկը լիներ անտառում, և դա կփոխեր իրադարձության ողջ դինամիկան, իսկ վերը նշված փաստը բոլորովին այլ մեկնաբանություն կստանար: Երբ ահաբեկչություն է իրականացվում, և ոչ ոք տեղյակ չէ, որ նման բան է պատահել, արդյո՞ք դա ահաբեկչություն է: Սակայն երբ լրագրողն այդ մասին տեղեկացնում է թեկուզև մեկ հոգու, իրավիճակի դինամիկան ամբողջապես փոխվում է:

Յուրաքանչյուր ոք, ով լսում է ահաբեկչական գործողության մասին, որոշակիորեն ազդվում է, ինչի հետևանքով վերջինիս ազդեցության ուժը բազմապատկվում է: Այսպիսով, հաշվի առնելով, որ ահաբեկչական գործողության յուրաքանչյուր լուսաբանում նպաստավոր է ահաբեկիչների համար, լրագրողի համար գրեթե անհնար է դառնում խուսափել ահաբեկչական գործողության դինամիկայի մի մասը լինելուց: Այդ պատճառով հաճախ ասվում է, թե լրագրողը «երկրորդ- ձեռք ահաբեկիչ է» (անգլերեն տարբերակով՝ "Second-hand terrorist")[3]:

Քանի որ ահաբեկչական գործողությունները լուսաբանման համար սենսացիոն նյութ են, ուստի յուրաքանչյուր լրատվամիջոց նման դեպքերում առավել ևս ցանկանում է լինել առաջին տեղեկացնողը: Ժամանակակից աշխարհում՝ հատկապես զարգացած տեխնոլոգիաների այս նոր դարաշրջանում, զանգվածային լրատվության միջոցներն առավել արդյունավետ են օգտագործվում ահաբեկիչների կողմից, քանի որ տարբեր հեռուստաընկերությունների և լրատվության այլ միջոցների միջև ընթանում է սուր մրցակցություն ինֆորմացիայի ձեռք բերման և առաջինը լուսաբանելու համար՝ այդպիսով ահաբեկիչներին տրամադրելով բազմահազարանոց լսարան:

Ճիշտ է, շատ լրագրողներ ցանկանում են լինել պրոֆեսիոնալ, ճշգրիտ իրենց հրապարակումներում՝ փորձելով խուսափել ապատեղեկատվությունից, սակայն մինչ կճշտվեն փաստերն ու կհավաքվեն տեղի ունեցածի առավել հավաստի մանրամասները, շատ հավանական է, որ տվյալ լրատվամիջոցը հայտնվի վերջինը տեղեկացնողի դերում, ինչն այնքան էլ լավ վարկանիշ չի ապահովի նրա համար: Լրագրողները ցանկանում են պաշտպանել հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքը և միաժամանակ լինել ազատ իրենց հրապարակումներում: Սա ներառում է ազդեցիկ և դրամատիկ լուսաբանում՝ այդ թվում զոհերի էմոցիոնալ վիճակի նկարագրություն կամ ցուցադրում: Օրինակ այդպիսի «զգացմունքային» վերնագրերով էին ողողված ամերիկյան պարբերականների էջերը սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո: Նման վերնագրերի կարելի էր հանդիպել մասնավորապես «Վաշինգթոն փոսթ» ամե-

ռիկյան պարբերականում. «Ժողովուրդը կաթվածահար վիճակում է, կարծես այն ապրում է իր «ամենասև օրը», «Այս ամբողջի ազդեցությունը վեր էր այն ամենից, ինչ մենք երբևէ տեսել էինք մինչ այդ» և այլն:

Լրագրողների համար երբեմն շատ դժվար է հրաժարվել նյութն ավելի ազդեցիկ դարձնելու գայթակղությունից. կարևոր չէ, թե նյութը կարող է լինել չափազանցված և ուռճացված: Այս դեպքում, սակայն, լրագրողները կարող են գործել ավելի շատ ի նպաստ ահաբեկիչների, քան հասարակության, քանի որ կկրկնապատկեն վախի ու սարսափի ազդեցությունը, ինչն էլ անրաժեշտ է ահաբեկիչներին: Չէ՞ որ, ըստ էության, յուրաքանչյուր ահաբեկչական գործողություն ուղղված է նաև նրան, որպեսզի «համայն աշխարհի ուշադրությունը հրավիրի ահաբեկիչներին հուզող հիմնախնդիրների վրա և այդ առումով ՁԼՄ-ի դերը անչափ մեծ է» ([4], [35]): Նույնիսկ շատ հաճախ պատահում են դեպքեր, երբ ահաբեկչական գործողությունը կատարվում է միայն ՁԼՄ-ով «գովազդվելու» նպատակով:

«Ահաբեկչությունը և ՁԼՄ-ները» թեման առավելապես ուսումնասիրված են Ռուսաստանում և ԱՄՆ-ում, թերևս ելնելով նաև այն հանգամանքից, որ հենց այդ պետություններն են առավելապես տուժում ահաբեկիչների հարձակումներից և կամ, ընդհակառակը, իրենք են քաղաքական տեռորի մեթոդներ կրառում:

Հայ իրականությունում պատկերը բոլորովին այլ է. բարեբախտաբար, մեր երկիրը ահաբեկիչների «սև ցուցակից» դուրս է, համենայն դեպս՝ առայժմ: Ուստի լրատվամիջոցներն էլ այդքան չեն առնչվում «ահաբեկչական» թեմաներին: Եվ, ընդհանրապես, «հայկական ահաբեկչություն» հասկացությունն էլ փոքր-ինչ խորթ է հնչում, քանի որ հայ մարդն իր բնույթով օտար է քաղաքական պայքարի նման ձևին: Այդուհանդերձ, տարբեր հեղինակների՝ ահաբեկչությանը նվիրված աշխատություններում հայկական որոշ կազմակերպությունների գործողությունները որակվում են որպես ահաբեկչություն: Խոսքը մասնավորապես վերաբերում է Ասալային /«Հայաստանի ազատագրական հայ գաղտնի բանակ»/: 1970-ականներին ստեղծված այս կազմակերպության հիմնական նպատակն էր՝ պատմական Հայաստանի ազատագրումը, ինչպես նաև՝ ստիպել Թուրքիային և միջազգային հանրությանը՝ ճանաչել հայերի ցեղասպանությունը: Հայերին բացահայտորեն ահաբեկչության մեջ մեղադրողը թերևս միայն Ադրբեջանն է: Ադրբեջանական ՁԼՄ-ն իր ծավալած ակտիվ հակահայկական քարոզչության շրջանակներում Հայաստանին կամ ԼՂՀ քաղաքացիներին մեղադրում է ոչ միայն թմրանյութերի անօրինական վաճառքի, թրաֆիկինգի և այլ երևակայական հանցանքների մեջ, այլև շրջանառության մեջ է դնում

ապատեղեկատվություն, թե իբր նշյալ տարածքներում ահաբեկչություններ են իրականացվում խաղաղ բնակչության նկատմամբ:

Որոշ փորձագետների ուսումնասիրությունների համաձայն՝ Հայաստանում ահաբեկչությունը որպես այդպիսին դրսևորվել է նաև 1990-ական թթ-ից, երբ Երևանում ի հայտ եկան այսպես կոչված առաջին «ասֆալտի ֆիդայիները», որոնք, երկրապահ զինվորի հագուստով և արտաքին խորհրդանիշներով քողարկված, սկսեցին զինված ահաբեկչության միջոցով առանձին քաղաքացիների և հիմնարկների ենթակայության մեքենաների զանգվածային գողությունները ([5], [52-57]):

Սակայն ահաբեկչությունը որպես երևույթ Հայաստանում լայն քննարկման առարկա դարձավ հոկտեմբերի 27-ից հետո: Այս ժամանակահատվածում էր, որ հայակական լրագրությունն ընդհուպ առնչվեց ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչությանը. հոկտեմբերի 27-ին «լրագրողի մասնագիտության ներկայացուցիչներ կային և զոհերի, և ահաբեկիչների թվում: Լրագրողները հանդես եկան և վկաների, և հանցակցության մեջ կասկածվողների դերում: Եվ, վերջապես, նրանց վիճակվեց դժվար առաքելություն՝ լույս սփռել կատարվածի վրա և օգնել հասարակությանը՝ հաղթահարելու հազարամյակի նախավերջին հոկտեմբերի իրադարձությունների առաջացրած ծանր ցնցումը»:

Նշենք, որ Հայաստանում տեղի ունեցածը տարբերվում էր մյուս երկու երկրներում՝ Ռուսաստանում և ԱՄՆ-ում կատարվածից հիմնականում նրանով, որ տեղական կամ, ինչպես ասում են, դոմեստիկ բնույթ էր կրում: Այսինքն, ժամանակակից աշխարհին հայտնի «ահաբեկչություն» կամ «տեռորիզմ» հասկացության մեջ հոկտեմբերի 27-ը որոշ վերապահումով պետք է ներառել: Մեր երկրի պարագայում թե ահաբեկիչները, թե ահաբեկչության զոհերը նույն երկրի ներկայացուցիչներ էին, մինչդեռ ոլորտի շատ մասնագետների և՝ ահաբեկչության ուսումնասիրմանը նվիրված գրականության մեջ այդ երևույթը դիտարկվում է որպես արտաքին հակառակորդի դեմ ուղղված գործողություն և հիմնականում իրականացվում է միջազգային մասշտաբներով: Ըստ իս՝ հենց այս հանգամանքն էլ տարբերակիչ գիծ էր մտցնում մեր և արտասահմանյան լրատվամիջոցների լուսաբանումների մեջ: Այսինքն, եթե սեպտեմբերի 11-ը լուսաբանելիս, հատկապես ամերիկյան մամուլը «խրված էր» ահաբեկչության կազմակերպիչների բացահայտման, տեղի ունեցածի մանրամասն նկարագրությունների մեջ /մասամբ՝ նաև ռուսաստանյան լրատվամիջոցները/, ապա հայաստանյան ՁԼՄ-ի ներկայացուցիչները տարված էին Հայաստանի քաղաքական-կուսակցական դաշտի մանրազննին ուսումնասիրություններով: Որոշ թերթեր, մոռացության մատնած տեղեկատվության հիմնական առարկան, բառացիորեն ներքաշվել էին կուսակցական «մարտերի» մեջ: Այնպես որ՝ «Մբոն-

լորտն այնպիսին էր, և թերևս այն շարունակվում է, որ Հայաստանում իրականությանն անծանոթ մարդը չէր հասկանա, ինչ և ինչու էր կատարվել Հայաստանում» ([5],[60]):

Ի դեպ, հայաստանյան պարբերականներից «Ազգն» էր, որ դատապարտում էր լուսաբանումների՝ ընդգծված քաղաքական-կուսակցական երանգավորումը: «Ի վերջո, գրեթե յուրաքանչյուր լրատվամիջոց ունի իր քաղաքական կողմնորոշումը, սակայն այս համակրանքը պիտի ի հայտ գա այն պահից հետո միայն, երբ բոլոր հնարավոր կտրվածքներով հավատարիմ ես մնացել իրականությանը»,-գրված է թերթի հրապարակումներից մեկում:

Ինչ անվանում էլ որ տան հոկտեմբերի 27-ի դեպքերին՝ ողբերգություն թե ահաբեկչություն, բարեբախտաբար, դրանից հետո մինչ օրս հայկական մամուլին առիթ չի ընծեռվել անդրադառնալ նմանօրինակ դեպքերի լուսաբանումների, համենայն դեպս այնպիսի, որոնք տեղի են ունեցել Հայաստանի տարածքում կամ որևէ կերպ առնչվում են հայ ազգի ներկայացուցիչների հետ:

Ներկայում հայաստանյան լրատվամիջոցներին առավել շատ հետաքրքրում են լրագրողների նկատմամբ բռնությունների դեպքերը, կամ նրանց նկատմամբ դրսևորվող պետական ահաբեկչությունը, քան ահաբեկչությունների լուսաբանումը, ինչն ավելի շատ տեղ է գտնում միջազգային լրահոսներում: Պետք է նկատել, որ պետական ահաբեկչության դրսևորումներ առավել շատ ի հայտ են գալիս նախկին Խորհրդային Միության երկրների տարածքում: Ցավոք, այդ տեսանկյունից Հայաստանը ևս բացառություն չէ: Այլ հարց է, երբ լրագրողներն իրենք են ահաբեկիչների թիրախ դառնում: Այս երևույթին ավելի շատ առնչվում են արևմտյան լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդ որում, հիմնականում Իրաքում, Իսրայելում և միջազգային ահաբեկչությունների այլ օջախներում: Այդ երկրներում լրագրողներին առևանգելու կամ վերջիններիս նկատմամբ բռնարարքներ կիրառելու մեթոդները յուրատեսակ բողոքի ակցիա են այն երկրների դեմ, որոնց ներկայացուցիչներն են տվյալ լրագրողները: Հատկանշական է, որ նրանք հիմնականում ԱՄՆ քաղաքացիներ են: Այսինքն՝ լրագրողները նաև այս տեսանկյունից են ներառվում ահաբեկիչների ծրագրերի մեջ:

Ահաբեկչական գործողություններին ավանդաբար հետևում են օրենսդրական սահմանափակումները: Դա կարծես օրինաչափ երևույթ է բոլոր երկրների համար: Իշխանությունների նման վերաբերմունքը շատ անգամ պատճառաբանում են նաև նրանով, որ «ահաբեկչություն» հասկացությունը լրատվամիջոցները երբեմն անհարկի շահարկման առարկա են դարձնում՝ անգամ փոքրիկ պայթյունը, հարձակումը, կողոպուտը, կամ միջադեպը անվանելով ահաբեկչություն:

Օրինակ, «Նորդ-Օստի» ահաբեկչությունից հետո Ռուսաստանի օրենսդիրներն անմիջապես ձեռնամուխ եղան «ԶԼՄ-ի մասին» և «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու գործընթացին, որը դժգոհության մեծ ալիք բարձրացրեց Ռուսաստանի ԶԼՄ ներկայացուցիչների շրջանում:

Գրաքննությունը Ռուսաստանում էլ ավելի սաստկացավ Բեսլանի ողբերգության լուսաբանումների ժամանակ և դրանից հետո: Այս ամենը բողոքի ալիք առաջացրեց անգամ Կրեմլի խոսնակի համբավ ձեռք բերած «Ռոսիա» հեռուստաընկերության աշխատակիցների շրջանում: Լրատվական թողարկման հաղորդավար Սերգեյ Բրիլյովը հայտարարեց, որ հասարակությանը պետք է հասանելի լինի ողջ ճշմարտությունը: Լրատվամիջոցներին արգելվել էր օգտագործել «հատուկ միջոցառում» և «շախիդներ» արտահայտությունները, հեռուստատեսությամբ չպետք է հնչեին «ահաբեկչություն» կամ «ահաբեկչական գործողություն» բառերը[6]: Խուսափելու համար վատթարագույնից՝ ռուսաստանյան լրատվամիջոցները որոշեցին դիմել ինքնագրաքննության մեթոդին՝ կամավոր սահմանափակումներ ստեղծելով իրենց համար, որպեսզի դրանք գոնե չարվեն իշխանությունների կողմից:

Ահաբեկչության դեմ պայքարի միջազգային-իրավական բազայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ահաբեկչության կանխմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական նորմերն այնքան խելացի և նրբանկատ պետք է մշակվեն, որպեսզի բավարարեն երկու հիմնական պահանջների՝ կանխեն ահաբեկչական գործողությունների հնարավոր «քարոզչությունը», սակայն միաժամանակ չխախտեն հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքը և կոպտորեն չսահմանափակեն խոսքի ազատությունը:

Գրականություն

[1] Глобальный терроризм в 2003 году, Доклад госдепартамента США

[2] Ահաբեկչություն.նախապայմաններն ու հետևանքները, «Ալիք» հասարակական կազմակերպություն, Երևան 2002

[3] L. Sloan, The media and terrorism, Terrorism Research Center 2000

[4] Գ.Նովիկովա, Թույների ուժեղ ազդավարությունը, Հայոց աշխարհից, Երևան 1999

[5] Լրագրողներն ընդդեմ ահաբեկչության և քոնությունների, Երևանի մամուլի ակումբ, Եր., 2000

[6] На госканалах теракт запретили, Известия, 25.08.2004